Հավելված 2
2025թ. «01» «21»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/ԼԿ-10/25 պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼԿ-10/25

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը՝** | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում. Տաշիր |
| **Դրամաշնորհի N** | N ԴՏՊ-1160-11012/ԼԿ-10/25 |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակատված** | 01.01.2025 – 31.12.2025 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.01.2025 – 31.12.2025 |
| **Ներկայացման օր** | 05.02.2026 |
| **Հաշվետվության պատասխանատու** | Սվետլանա Հարությունյան<br>Ծրագրի համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

### 2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար

**Միջոցառում 1.** Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ:
**Միջոցառում 2.** Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:
**Միջոցառում 3.** Սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված ծառայությունների տրամադրում:
**Միջոցառում 4.** Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:
**Միջոցառում 5.** Հանրային միջոցառումներ և ՁԼՄ լուսաբանում:
**Միջոցառում 6.** Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:
**Միջոցառում 7.** Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:
**Միջոցառում 8.** Ազատ ժամանցի և մշակութային միջոցառումների կազմակերպում:
**Միջոցառում 9.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:
**Միջոցառում 10.** Շահառուների 7-օրյա ամառային հանգիստ «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

**Միջոցառում 1.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով 28 շահառուի կարիքների գնահատում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 2.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով **28** սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 3.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **28** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 4.** Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտությունների զարգացնող խմբակներում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 5.**

- 09.03.2025 թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի շահառուները այցելել են Տաշիրի մշակույթի տուն, մասնակցել կանանց միամսյակին նվիրված միջոցառմանը:
- 01.06.2025թ կենտրոնի շահառուները մասնակցեցին Տաշիրի մշակույթի տանը կազմակերպված երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ միջոցառմանը:
- 10.06.2025թ կենտրոնի շահառուները մասնակցեցին նկարչական ցուցահանդեսին «Արդար և մրցունակ կանաչ անցման խթանում» խորագրով: Կենտրոնի շահառուները ներկայացան իրենց աշխատանքներով: Կենտրոնի շահառուները արժանացան շնորհակալագրերի:
- 30.07.2025թ Տաշիրի «Լիարժեք Կյանք» ՀԿ-ն շահառուները մասնակցեցին ՀԱՄԱ-ՀՄԸՄ ական 12-րդ մարզախաղերին: Երեք շահառու արժանացան պատվավոր առաջին հորիզոնականին, իսկ մյուս մասնակիցները խրախուսվեցին փոքրիկ նվերներով:
- 03.12.2025թ -ին կազմակերպվել է միջոցառում նվիրված հաշմանդամության միջազգային օրվան: Կենտրոնի սաները և մասնագետները միասին պատրաստել են իրազեկող պաստառ և տեսահոլովակ՝ նպատակ ունենալով իրենց ձայնը լսելի դարձնել հասարակության շրջանում:

**Միջոցառում 6.** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառուների և նրանց ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները՝

- Թեմա՝ «Երեխա-ծնող կապի ամրապնդում»: Դասընթացը վարեց կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը:
- Աշխատարան՝ «Արտթերապևտիկ աշխատանքը ծնողների հետ»: Աշխատարանը վարեց հոգեբան Լուսինե Կաֆիյանը:

- Թեմա՝ «Հատուկ մանկավարժություն, ծնողների ակնկալիքները»: Դասընթացը վարեց հատուկ մանկավարժ Աննա Պողոսյանը:
- Թեմա՝ «Դրական կարգապահություն, արդյունավետ կանոնների ներդրում»: Դասընթացը վարեց կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը:
- Թեմա՝ «Դրական հույզերի արտահայտում և ամրապնդում», դասընթացը վարեց հոգեբան Լուսինե Կաֆիյանը:
- Թեմա՝ «Խաղը որպես զարգացման գործիք», դասընթացը վարեց հատուկ մանկավարժ Աննա Պողոսյանը:
- Թեմա՝ «Ընդհանուր հասկացություն կինեզիալոգիայի մասին» , դասընթացը վարեց կինեզիոլոգ Լուսինե Ավետիսյանը:
- Թեմա՝ «Ծնողավարումը թվային դարում»: Դասընթացը վարեց կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը:
- Թեմա՝ Տեխնիկա՝ ուղված ռեսուրսների վերհանմանը «Իմ ներսի լույսը»: Դասընթացը վարեց հոգեբան Լուսինաե Կաֆիյանը:
- Թեմա՝ «Ծնող- մասնագետ արդյունավետ համագործակցություն» դասընթացը վարեց հատուկ մանկավարժ Աննա Պողոսյանը:
- Թեմա՝ «Մանկական ուղեղային կատված. առաջացման պատճառները», դասընթացը վարեց կինեզիոլոգ Լուսինե Ավետիսյանը:
- Թեմա՝ «Ինքնախնամքի կարևորությունը առօրյա կյանքում»: Դասընթացը վարեց կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը:
- Թեմա՝ Տեխնիկա՝ ուղղված ռեսուրսների վերհանմանը «Իմ ներսի լույսը»: Դասընթացը վարեց հոգեբան Լուսինե Կաֆիյանը:
- Թեմա՝ «Ընթերցանության խանգարումների հաղթահարման արդյունավետ մեթոդները»: Դասընթացը վարեց հատուկ մանկավարժ Աննա Պողոսյանը:
- Թեմա՝ «Տեխնիկա՝ ուղված կյանքի դժվարությունների, խնդիրների վերհանմանը «Կյանքի գետը»: Դասընթացը վարեց կինեզիոլոգ Լուսինե Ավետիսյանը:
- Թեմա՝ «Արտթերապիա՝ «իմ ներքին կինն է» տեխնիկա ուղղված ցգացմունքային հավասարակշռությանը և կենտրոնացմանը: Դասընթացը վարեց կենտրոնի արտթերապիստ Մարինե Մեսրոպյան:

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 7/ հաշվետու ժամանակահատվածում թվով 28 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առնչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 8.**

- 22.04.2025թ կենտրոնում ծնողների նախաձեռնությամբ կազմակերպվել է Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարության տոնը, որը ուղեկցվեց հյուրասիրությամբ և խաղերով: Միջոցառմանը մասնակցել են 10 երեխա, 5 ծնող:
- 13.06.2025թ Տաշիրի կենտրոնական գրադարանում կենտրոնի շահառուները մասնակցել են հեքիաթի ընթերցանության և քննարկմանը:Միջոցառմանը մասնակցել են 5 երեխա:
- 11.07.2025թ-ին Տաշիրի կենտրոնական գրադարանում երեխաները մասնակցել են հեքիաթի ընթերցանությանը և քննարկմանը:
- 17.12.2025թ -ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի և Տաշիրի համայնքային գրադարանի հետ համագործակցությամբ կազմակերպվել է կենտրոնի շահառու Տիգրան Հովհաննիսյանի հեղինակային գրքի շնորհանդեսը:

**Միջոցառում 9.** Իրականացվել է գնահատում (ծրագրի 3, 6, 9, 12-րդ ամիսների ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Իրականացված գնահատման

արդյունքում հստակ և պարզ դարձավ, որ Ծրագիրը միանշանակ աջակցում է շահառուներին, այդ են վկայում հարցված շահառուների 88,75 % մոտ արձանագրված կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճը և գոհունակությունը՝ ստացած ծառայություններից:
**Միջոցառում 10**. Համաձայն գործողությունների պլանի 23.07-07.08.2025 թ-ին կենտրոնի թվով 5 շահառուներ իրենց 7-օրյա ամառային հանգիստն են անցկացրել Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝**

Ստորև ներկայացվում է Ստեփանավանի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը FULL LIFE Tashir | Facebook

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

- 30.01.2025թ., 27.02.2025թ., 29.04.2025թ., 30.05.2025թ., 30.06.2025թ. , 27.08.2025թ., 30.09.2025թ., 30.10.2025թ., կենտրոնի համակարգող Սերինե Ղազարյանը մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության Տաշիրի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի նիստին:
- 16-17.05.2025 թ-ին կենտրոնի հոգեբան Լուսինե Կաֆիյանը մասնակցել է «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամի կողմից կազմակերպված «Բարելավելով հոգեբանական ծառայությունները ՀՀ-ում տեղահանված և մարգինալացված խմբերի համար» վերապատրաստումների առաջին փուլին:
- 02-03.05.2025թ, կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը և հոգեբան Լուսինե Կաֆիյանը մասնակցեցին «Հավասարություն և մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար» ծրագրի շրջանակներում կազմակերպված՝ «Ֆունկցիաների միջազգային դասակարգումը որպես կարիքների գնահատման համակարգ» թեմայով երկօրյա դասընթացին:
- 18.05.2025թ կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը և հոգեբան Լուսինե Կաֆիյանը մասնակցեցին «Ծնողի դպրոց» ՀԿ-ի կողմից կազմակերպած «Դրական կարգապահություն» թեմայով դասընթացին:
- 23-25.06. 2025թ. ծրագրի համակարգող Սվետլանա Հարությունյանը մասնակցել է «Երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման ընթացակարգերը» լրացուցիչ կրթական ծրագրով նախատեսված վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացին:
- 02.07.2025թ Սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը մասնակցել է «Ծնողի դպրոց» ՀԿ -ի կողմից կազմակերպված «Ծնողավարումը թվային դարում» թեմայով դասընթացին:

- 28-29.08.2025 թ-ին կենտրոնի հոգեբան Լուսինե Կաֆիյանը մասնակցել է «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմանդրամի կողմից կազմակերպված «Բարելավելով հոգեբանական ծառայությունները ՀՀ-ում տեղահանված և մարգինալացված խմբերի համար» վերապատրաստումների երկրորդ փուլին:
- 03-04.10.2025թ Սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը մասնակցել է «Ծնողի դպրոց» ՀԿ -ի կողմից կազմակերպված «Հոգեկան առողջությունը դեռահասների և երիտասարդների հետ աշխատելիս» թեմայով դասընթացին:
- 28-29.11.2025 թ-ին կենտրոնի հոգեբան Լուսինե Կաֆիյանը մասնակցել է «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմանդրամի կողմից կազմակերպված «Բարելավելով հոգեբանական ծառայությունները ՀՀ-ում տեղահանված և մարգինալացված խմբերի համար» վերապատրաստումների երկրորդ փուլին:

Ծրագրի համակարգող՝ Ս․Հարությունյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս. Մաղաքյան

2026-02-05 17:49:02 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից